<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *«ԳՀԱՊՁԲ-2019/15-5-ԵՊԲՀ-3»*

ք. Երևան << >> << >> 2019 թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդիսար» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մանվել Գաբրիելյանի, որը գործում է «Մեդիսար» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **488200**(չորս հարյուր ութսուն ութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 2.2.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	<<Մեդիսար>> ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցեն՝ ք.Երևան, Գետառի 4/9
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 2050022415811001
հ/հ 11500166513800	ՀՎՀՀ 02555635
ՀՎՀՀ 01503448	Էլ.փոստ՝ sales@medisar.am
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	Տնօրեն՝ Մ. Գաբրիելյան
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.24 19:53:22 AMST

Digitally signed by GABRIELYAN MANVEL 3507550326
Date: 2019.05.22 15:44:01 AMST

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-2019/15-5-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանա կը	ժամկետը
13	33691160	Ռիֆամպիցինի դիսկ РИФ 5	НИЦФ ՌԴ	Ռիֆամպիցինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	12600	900	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	900	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
15	33691160	Նիստատինի դիսկ НИС 80ЕД	НИЦФ ՌԴ	Նիստատինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	4200	300	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	300	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

17	33691160	Կետոկոնազոլի դիսկ KET 20	ՀՈՒՄՓ ՌԴ	Կետոկոնազոլի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	1400	100	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	100	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
18	33691160	Կարբենիցիլլինի դիսկ KAP 25	ՀՈՒՄՓ ՌԴ	Կարբենիցիլլինի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	2800	200	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	200	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
19	33691160	Իմիպենեմի դիսկ IM 10	ՀՈՒՄՓ ՌԴ	Իմիպենեմի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	15400	1100	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1100	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
20	33691160	Կլոտրիմազոլի դիսկ KOT 10		Կլոտրիմազոլի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր	հատ	14	2800	200	ք.Երևան Աբովյան	200	2019 թվականին՝

			ՀԻՑՓ ՌԴ	է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:					60 և/կամ Մուրացան 114 հասցեներով		միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
29	33691160	Ամպիցիլլին սուլբակտամի դիսկ AMC 10/10	ՀԻՑՓ ՌԴ	Ամպիցիլլին սուլբակտամի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	14000	1000	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1000	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
33	33691160	Վանկոմիցինի դիսկ BA 30	ՀԻՑՓ ՌԴ	Վանկոմիցինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	14000	1000	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1000	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
34	33691160	Պոլիմիքսինի դիսկ Պոլիմիքսինի	ՀԻՑՓ ՌԴ	Պոլիմիքսինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված:	հատ	14	4200	300	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան	300	2019 թվականին՝ միանվագ կամ

		դիսկ		Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:					ն 114 հասցեներ ով		փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
36	33691160	Օքսացիլլինի դիսկ ОКС 1	НИЦФ ՌԴ	Օքսացիլլինի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	5600	400	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներ ով	400	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
37	33691160	Կոլիստինի դիսկ CT-10	Biolab Հունգարիա	Կոլիստինի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	22	4400	200	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներ ով	200	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
39	33691160	Ստրեպտոմիցինի դիսկ ST 10	НИЦФ ՌԴ	Ստրեպտոմիցինի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի	հատ	14	1400	100	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներ	100	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ

				1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:					ով		Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
40	33691160	Լինկոմիցինի դիսկ ЛИН 15	НИЦФ ՌԴ	Լինկոմիցինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	1400	100	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	100	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
41	33691160	Նետիլմիցինի դիսկ НИЦ 30	НИЦФ ՌԴ	Նետիլմիցինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	1400	100	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	100	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
42	33691160	Ցեֆալոտինի դիսկ ЦФ 30	НИЦФ ՌԴ	Ցեֆալոտինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	14	2800	200	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	200	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի

				Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:							ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
43	33691160	Տրիմետոպրիմի դիսկ TMP-5	Biolab Հունգարիա	Տրիմետոպրիմի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	22	33000	1500	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1500	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
45	33691160	Մերոպենեմի դիսկ МПН 10	НИЦФ ՌԴ	Մերոպենեմի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	32200	2300	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	2300	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
48	33691160	Օպտոխինի դիսկ OP-5	Biolab Հունգարիա	Օպտոխինի դիսկ: Ֆորմատ՝1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	28	5600	200	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	200	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված

											պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
49	33691160	Պիպերացիլլին-տազոբակտամի դիսկ TPZ-36	Biolab Հունգարիա	Պիպերացիլլին-տազոբակտամի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	22	11000	500	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	500	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
50	33691160	Ցեֆոպերազոն-սուլբակտամի դիսկ CEZ-105	Biolab Հունգարիա	Ցեֆոպերազոն-սուլբակտամի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	22	4400	200	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	200	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
51	33691160	Բացիտրացինի դիսկ ԲՑ 0,04	ՀԻՑՓ ՌԴ	Բացիտրացինի դիսկ: Ֆորմատ՝ 1 դիսկ/հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	14	1400	100	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	100	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20

											օրացույցայի ն օրվա ընթացքում
60	33691422	Մանիտոլ էլեկտիվ աղային ագար Mannitol Salt Agar	Biolab Հունգարի ա	Մանիտոլ էլեկտիվ աղային ագար: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Փաթեթավորումը՝ 500գ տարաներում: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	կգ	26000	52000	2	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեներ ով	2	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա ընթացքում
63	33691422	Սաբուրո ագար Питательная среда для контроля микробной загрязненности сухая-М (агар Сабуро)	ФГУП «НПО» «Микроген » ՌԴ	Սաբուրո ագար: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Փաթեթավորումը՝ 250գ տարաներում: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում:	կգ	26000	104000	4	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեներ ով	4	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա ընթացքում
69	33691422	Ացետատ ագար Питательная среда для индентификации энтеробактерий сухая (Ацетатный агар)	ФГУП «НПО» «Микроген » ՌԴ	Ացետատ ագար: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Փաթեթավորումը՝ 360գ տարաներում: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում:	կգ	46666,67	35000	0.75	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեներ ով	0.75	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատ ուի ներկայացվ ած պահանջի՝ 20 օրացույցայի ն օրվա

											ընթացքում
73	33691422	Չոր սննդային ագար Питательный агар для культивирования Микроорганизмов сухой (СПА)	ФГУП «НПО» «Микроген» ՌԴ	Չոր սննդային ագար: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Փաթեթավորումը՝ 250գ, տարաներում: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում:	կգ	27000	27000	1	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
84	33691158	Ցոլիկլոն Anti-K serum Ցոլիկլոն Anti-K serum	Гематолпг ՌԴ	Ցոլիկլոն Anti-K serum 5 մլ: Մեթոդ՝ հեմագլյուտինացիա: Ֆորմատ՝ 5մլ սրվակ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյուն: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝2-8C:	հատ	1800	25200	14	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	14	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
86	33691158	Ցոլիկլոն Anti D IG M+ IG G serum Ցոլիկլոն Anti D IG M+ IG G serum	Гематолпг ՌԴ	rh (D) ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեստ, (Ցոլիկլոն Анти D IG M+ IG G), Մեթոդ՝ հեմագլյուտինացիա: Ֆորմատ՝ 10մլ սրվակ/հատ: Ստուգվող նմուշ՝ արյուն: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8C, For In	հատ	3000	69000	23	ք.Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	23	2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

				Vitro Diagnost only:							

1. Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.24 19:53:45 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Մեդիսար>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Գետառի 4/9
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635
Էլ.փոստ՝ sales@medisar.am
Տնօրեն՝ Մ. Գաբրիելյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by GABRIELYAN MANVEL 3507550326
Date: 2019.05.22 15:45:18 AMST

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-2019/15-5-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
13	33691160	Ռիֆամպիցինի դիսկ	-	-	-	-	12600	12600	12600	12600	12600	12600	12600	12600	12600
15	33691160	Նիստատինի դիսկ	-	-	-	-	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200
17	33691160	Կետոկոնազոլի դիսկ	-	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
18	33691160	Կարբենիցիլլինի դիսկ	-	-	-	-	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800
19	33691160	Իմիպենեմի դիսկ	-	-	-	-	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400	15400
20	33691160	Կլոտրիմազոլի դիսկ	-	-	-	-	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800
29	33691160	Ամպիցիլլին սուլբակտամի դիսկ	-	-	-	-	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000

33	33691160	Վանկոմիցինի դիսկ	-	-	-	-	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000
34	33691160	Պոլիմիքսինի դիսկ	-	-	-	-	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200	4200
36	33691160	Օքսացիլլինի դիսկ	-	-	-	-	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600
37	33691160	Կոլիստինի դիսկ	-	-	-	-	4400	4400	4400	4400	4400	4400	4400	4400	4400	4400
39	33691160	Ստրեպտոմիցինի դիսկ	-	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
40	33691160	Լինկոմիցինի դիսկ	-	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
41	33691160	Նետիլմիցինի դիսկ	-	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
42	33691160	Ցեֆալոտինի դիսկ	-	-	-	-	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800	2800
43	33691160	Տրիմետոպրիմի դիսկ	-	-	-	-	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000	33000
45	33691160	Մերոպենեմի դիսկ	-	-	-	-	32200	32200	32200	32200	32200	32200	32200	32200	32200	32200
48	33691160	Օպտոխինի դիսկ	-	-	-	-	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600
49	33691160	Պիպերացիլլին-տազոբակտամի դիսկ	-	-	-	-	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000
50	33691160	Ցեֆոպերազոն-սուլբակտամի դիսկ	-	-	-	-	4400	4400	4400	4400	4400	4400	4400	4400	4400	4400
51	33691160	Բացիտրացինի դիսկ	-	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400

60	33691422	Մանիտոլ էլեկտիվ աղային ագար	-	-	-	-	52000	52000	52000	52000	52000	52000	52000	52000	52000
63	33691422	Սաբուրո ագար	-	-	-	-	104000	104000	104000	104000	104000	104000	104000	104000	104000
69	33691422	Ացետատ ագար	-	-	-	-	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000
73	33691422	Չոր սննդային ագար	-	-	-	-	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000	27000
84	33691158	Ցոլիկլոն Anti-K serum	-	-	-	-	25200	25200	25200	25200	25200	25200	25200	25200	25200
86	33691158	Ցոլիկլոն Anti D IG M+ IG G serum	-	-	-	-	69000	69000	69000	69000	69000	69000	69000	69000	69000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով ըստ մատակարարված ապրանքների:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.24 19:53:59 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Մեդիսար>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Գետառի 4/9
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635
Էլ.փոստ՝ sales@medisar.am
Տնօրեն՝ Մ. Գաբրիելյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by GABRIELYAN MANVEL 3507550326
Date: 2019.05.22 15:46:54 AMST

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն